ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ 2024-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտները ներառում են զանգվածային (մասսայական), մանկապատանեկան և բարձրագույն նվաճումների սպորտի ենթաոլորտները: Եռաստիճան այս համակարգի ամբողջ գործունեությունն ուղղված է մարդու ներդաշնակ և բազմակողմանի զարգացմանը, հանրության շրջանում առողջ ապրելակերպի և ակտիվ հանգստի արմատավորմանը, երկարակեցության ապահովմանը, սպորտի ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացմանը:

Սպորտային բարձր նվաճումների, առողջ ապրելակերպով (ներառյալ առողջ ֆիզիկական ակտիվությունը) բնակչություն ունեցող երկրի տեսլականի իրագործումն իրականացվում է ռազմավարական 2 հիմնական ուղղություններով՝

1. Ֆիզիկական ակտիվությունը և առողջ ապրելակերպը դարձնել ազգային կենսակերպ,
2. Հայաստանի Հանրապետությունը դարձնել սպորտային բարձր նվաճումների երկիր:

Ռազմավարության 2025 թվականի առաջընթացի սույն հաշվետվությունը ներկայացված է նշված երկու ռազմավարական ուղղությունների շրջանակում իրականացված միջոցառումների տրամաբանությամբ՝ դրանք խմբավորելով՝ ըստ ոլորտային նպատակների:

Միևնույն ժամանակ, 2025 թվականին շեշտադրվել են ոլորտի տնտեսականացման նախադրյալների ստեղծման և թվայնացման ուղղությունները:

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՊՈՐՏ

Զանգվածային մարզական միջոցառումներին բնակչության մասնակցությունը խթանելու նպատակով՝ հաշվետու տարում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցությունը զգալիորեն աճել է՝ ընդլայնելով դպրոցականների ներգրավվածությունը և խթանելով սպորտի գրավչության բարձրացումը:

2025 թվականին Վարչապետի գավաթի շրջանակներում կազմակերպվել են դպրոցականների վեց մարզաձևերի մրցաշարեր՝ հեծանվավազքի, սեղանի թենիսի, թիմային խճուղավազքի, լողի, վոլեյբոլի ու բասկետբոլի, որոնց 2025 թվականին մասնակցել է ավելի քան 25 000 մարդ՝ 2.6 անգամ գերազանցելով 2024 թվականի և 3.8 անգամ՝ 2023 թվականի մասնակցության ցուցանիշները: Հանրապետության դպրոցների շուրջ 42%-ը մասնակցել է Վարչապետի գավաթի շրջանակներում անցկացվող մրցաշարերից առնվազն մեկին:

Շուրջ 6 500 հեծանիվներ ձեռք բերելու և բոլոր դպրոցներին տրամադրելու արդյունքում «ՀՀ վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի մրցաշարին մասնակցել է ավելի քան 4 000 աշակերտ, որը 3 անգամ ավելի է 2024 թվականի ցուցանիշից, իսկ դպրոցների

68% ընդգրկվածությունը՝ ծրագրի մեկնարկից ի վեր ամենաբարձր մասնակցությունն է այս մրցաշարերում:

ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվել են նաև ուժային կառույցների միջև բանակային խաղերը, որոնց վերջին երկու տարիներին մասնակցել է ուժային և իրավապահ կառույցների 346 աշխատակից՝ կրկնակի գերազանցելով նախորդող տարիների ցուցանիշները:

Ներդրվել է բուհերի և քոլեջների դասախոսների ու ուսանողների համար հեծանիվների ապառիկ ձեռքբերման դեպքում տոկոսադրույքները սուբսիդավորելու մեխանիզմ:

Ստեղծվել են նախադրյալներ ուսանողական սպորտի զարգացման համար՝ խթանելով բուհերում ուսանողական մարզական ակումբների գործունեությունը, հստակեցնելով ուսանողների մարզական ակտիվության կարևորությունը՝ որպես ուսումնառության մաս:



Գծապատկեր 1. «ՀՀ վարչապետի գավաթ» խորագիրը կրող մրցաշարերի մասնակիցների թիվը 2023-2025 թվականներին

Անցկացվել են մարզական մասսայական այլ միջոցառումներ ևս, մասնավորապես՝

- ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը, որին մասնակցել է 604 դպրոցի՝ 9 460 սովորող.
- ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների «Սպարտակիադա» մարզական միջոցառումը, որն անցկացվել է 4 փուլով 8 մարզաձևից՝ հրաձգություն, բազկամարտ, շախմատ, սեղանի թենիս. հնգամարտ, ֆուտզալ, վոլեյբոլ և բասկետբոլ: Բոլոր 8 մարզաձևերից մասնակցել է 675 դպրոցի՝ 23 359 սովորող.

- նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը, որոնց մասնակցել է 522 դպրոցի՝ 4 968 սովորող.
- անցկացվել է նաև «Հանրապետական ուսանողական մարզական խաղեր» միջոցառումը, որին մասնակցել են 20 բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական ակումբների թիմերը՝ 12 մարզաձևերից, ուսանողների թիվը՝ 1 000:

Տարվա ընթացքում անցկացվել է նաև մարզական մասսայական 4 միջոցառում, որոնց մասնակցել է ավելի քան 38 700 մարդ:

ՀՀ Վարչապետի գավաթի մրցաշարերին, ՀՀ վարչապետի հովանու ներքո ուժային կառույցների միջև անցկացվող ռազմամարզական խաղերին և այլ մարզական մասսայական միջոցառումներին 2025 թվականին մասնակցել է ավելի քան 64 000 մարդ՝ ապահովելով 27%-ով ավելի մասնակցություն 2024 թվականի նկատմամբ:

Ֆիզիկական կուլտուրայի նկատմամբ բնակչության դրական դիրքորոշում ձևավորելուն ուղղված միջոցառումների շրջանակում ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ իրականացված տարբեր ծրագրերի ընթացքում պատրաստվել ու տարածվել են առողջ ապրելակերպը և ֆիզիկական ակտիվությունը խրախուսող տեղեկատվական նյութեր:

ՖԱՍԹ-ի կողմից մշակվել է առողջ ապրելակերպը խթանող «YoHealth» էլեկտրոնային հավելվածը:

Հանրության շրջանում առողջ ապրելակերպի խրախուսման նպատակով նախաձեռնվել և իրականացվել է հանրային հարցում (այսուհետ՝ Հարցում) ավելի քան 1600 հոգու շրջանում՝ Եվրաբարոմետրի մեթոդաբանությանը համապատասխան՝ ստանալով նախնական տվյալներ հանրային վարքագծի վերաբերյալ՝ հետագա քաղաքականությունների մշակման համար: Նախատեսվում է, որ հետազոտությունը կդառնա ամենամյա՝ արդիական տվյալներ տրամադրելով արդյունավետ քաղաքականությունների համար:

Անցկացված հարցման արդյունքներով հարցվածների շրջանում ամեն տասից չորսը զբաղվում է ֆիզիկական վարժություններով կամ սպորտով, ընդ որում ամենից հաճախ դա քայլքն է: Միևնույն ժամանակ հարցվածները օրվա մեջ միջինում 5.5 ժամ անցկացնում են նստած, ինչն ակնհայտ խոչընդոտ է առողջ ապրելակերպի համար:



Գծապատկեր 2. Հարցման արդյունքը ֆիզիկական ակտիվության վարքագծի վերաբերյալ



Գծապատկեր 3. Հարցման արդյունքը ֆիզիկական ակտիվության վարքագծի վերաբերյալ

Կարևոր է, որ հարցվածների ավելի քան 78%-ը կարևորում է ֆիզիկական ակտիվությունը առողջության համար, ինչը լավ ներուժ է՝ առողջ ապրելակերպի հետագա խրախուսումը հանրության շրջանում իրականացնելու համար:

Գծապատկեր 4. Հարցման արդյունքը ֆիզիկական ակտիվության վերաբերմունքի մասով



Գծապատկեր 5. Հարցման արդյունքը ֆիզիկական ակտիվության խոչընդոտների վերաբերյալ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի փետրվարի 20-ի N 563-Ա/2 հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի մարզական վարկանիշային սանդղակի ձևավորման կարգի» համաձայն, կազմվել է 2024 թվականի մարզական վարկանիշային սանդղակը: Այն հրապարակվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում՝ https://escs.am/files/files/2025-02-28/fd1004eeba4f21c3789c52c28cde557c.pdf հղմամբ, համաձայն որի՝ առաջին երեք մրցանակային տեղեր են զբաղեցրել՝ Կոտայքի, Սյունիքի և Լոռու մարզերը:

Մրցանակային տեղեր զբաղեցրած մարզերը ստացել են համապատասխանաբար՝ 8 մլն ՀՀ դրամ, 5 մլն ՀՀ դրամ և 3 մլն ՀՀ դրամ արժողությամբ մարզագույք: Միաժամանակ իրականացվել են 2025 թվականի մարզական վարկանիշային սանդղակի մշակմանն ուղղված աշխատանքներ, որոնց արդյունքները կամփոփվեն 2026 թվականին:

Մարզական միջոցառումների մասսայականացման նպատակով, 2025 թվականի ընթացքում ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցները կազմակերպել են տարբեր մարզաձևերի հայազգի անվանի մարզիկների անվամբ անվանակոչված 13 մարզական զանգվածային միջոցառում:

Մարզական նախասիրություններ և կարողություններ ունեցող երեխաների բացահայտման և ներգրավման նպատակով, մանկապատանեկան մարզադպրոցներում տարվա ընթացքում իրականացվել են 786 բաց դռների օրեր և մրցույթներ:

ՀՀ քաղաքացու օրվա տոնակատարությունների ընթացքում իրականացվել են հանդիպումներ դպրոցականների, բնակչության և անվանի մարզիկների միջև: 2025 թվականին իրականացվել է 15 հանդիպում, և համանման հանդիպումները կազմակերպվում են պարբերաբար:

Ինչպես նաև իրականացվել է կամավորների ներգրավում՝ տարբեր զանգվածային միջոցառումներին: Մասնավորապես՝

2025 թվականին իրականացված զանգվածային միջոցառումներին մասնակցել է 196 կամավոր, որից 40 կամավոր՝ «ՀՀ վարչապետի գավաթ» սեղանի թենիսի մրցաշարին, 50 կամավոր՝ «ՀՀ վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մրցաշարին, 32 կամավոր՝ բասկետբոլի լիգային, 30 կամավոր՝ խճուղային հեծանվավազքին, 22 կամավոր՝ լողի դպրոցականների մրցաշարին, և ևս 22 կամավոր՝ վոլեյբոլի լիգային,

2025 թվականին հանրապետությունում անցկացված չորս խոշոր միջազգային միջոցառումներին (տափօղակով հոկեյի աշխարհի առաջնության «Դ» դիվիզիոնի մրցաշար, կարատեի մեծահասակների Եվրոպայի առաջնություն, բասկետբոլի Եվրոպայի մինչև 20 տարեկանների առաջնության «Բ» դիվիզիոնի մրցաշար և վոլեյբոլի մինչև 16 տարեկան տղաների Եվրոպայի առաջնության եզրափակիչ) մասնակցել է 400 կամավոր: Կամավորների ընդհանուր թիվը կազմել է՝ 596:

2025 թվականին ՀՀ կառավարությունը ներդրել է նաև բուհերի և քոլեջների դասախոսների և ուսանողների համար հեծանիվների ապառիկ ձեռքբերման դեպքում տոկոսադրույքները սուբսիդավորելու մեխանիզմ, որն ուղղված է թե՛ ֆիզիկական առողջ ակտիվության խրախուսմանը, թե՛ նաև հեծանիվը՝ իբրև այլընտրանքային փոխադրամիջոց գործածելու վարքագծի տարածմանը: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նախաձեռնել է հանրային արշավներ ուսումնական հաստատություններում՝ ծրագիրը խթանելու, իրազեկելու, հեծանվավարության անվճար դասընթացների կազմակերպելու համար:

Խրախուսվել են սպորտի մասին ֆիլմերը: Վերջին երկու տարում հանդիսատեսին է ներկայացվել սպորտի մասին երկու ֆիլմ և մեկ սերիալ, որոնք մոտիվացնում են սպորտով զբաղվելը: Դրանցից Նազիկ Ավդալյանի մասին պատմող՝ «Մեդալի հակառակ կողմը» ֆիլմի պարագայում, ՀՀ պետական բյուջե է վերադարձվել 40 մլն դրամ՝ ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարի 100%-ը: Ֆիլմը մեծ արձագանք է ստացել, ցուցադրվել է 11 երկրում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում կարողությունների զարգացմանն ու մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ստեղծմանը միտված՝ 2023 թվականից սկսած կազմակերպվում են ՀՀ-ում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման դասընթացներ և ատեստավորման գործընթաց՝ վերջինիս արդյունքներով հավելավճարների տրամադրմամբ:

Արտադպրոցական հաստատությունների մարզչի-մանկավարժների համար 6 մարզաձևերից (շախմատ, լող, սպորտային մարմնամարզություն, սպորտային ակրոբատիկա, ցատկացանց, գեղարվեստական մարմնամարզություն) 2025 թվականի կամավոր ատեստավորմանը հայտագրվել են 98 մասնակից, թեստային փուլում մասնակցել են 87 մարզիչ-մանկավարժ, արդյունքում անցողիկ շեմը հաղթահարել են 12 մարզիչ մանկավարժ, ովքեր նաև հավելավճար են ստանում հետևյալ մասնաբաժիններով՝

- 90-100 տոկոս արդյունք՝ 138 300 դրամ լրավճար՝ մեկ դրույք ծանրաբեռնվածության համար.
- 80-89 տոկոս արդյունք՝ 111 500 դրամ լրավճար՝ մեկ դրույք ծանրաբեռնվածության համար.
- 70-79 տոկոս արդյունք՝ 80 600 դրամ լրավճար՝ մեկ դրույք ծանրաբեռնվածության համար:

Միաժամանակ 2025 թվականին վերապատրաստվել է 125 մարզիչ-մանկավարժ:

Վերապատրաստված միջազգային կարգի մրցավարներ ունենալու նպատակով՝ ապահովվել է հանրապետական ֆեդերացիաների ներկայացուցիչների մասնակցությունը միջազգային ֆեդերացիաների կողմից կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումներին: Մասնավորապես 2025 թվականին ապահովվել է 7 մարզիչ-ներկայացուցչի մասնակցությունը վերապատրաստման միջազգային դասընթացներին:

Ոլորտի կառավարման բարեփոխումների համատեքստում՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որով կարգավորվում են ֆիթնես կենտրոնների գործունեությունը և վերջիններիս մարզիչների հավաստագրման կարգը, ընդլայնվում են ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները:

Տեղեկատվական համակարգերի գործակալության կողմից հաստատվել է սպորտի ոլորտում թվայնացման հայեցակարգը, որի համաձայն մեկնարկել են Սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները. ստեղծվել և փորձարկվում է մարզադպրոցների բաղադրիչը, ընթացքում է մարզական ֆեդերացիաների բաղադրիչի մշակումը: Տեղեկատվական համակարգը ոլորտում թափանցիկության, հաշվետվողականության, ճշգրիտ վիճակագրության վարման արդիական գործիք է հանդիսանալու:

Ֆեդերացիաների հետ համագործակցությունը 2024 թվականից իրականացվում է նոր ձևաչափով՝ սահմանվել են հստակ չափորոշիչներ, ինչպես նաև հավելյալ գործակիցներ՝ կախված տվյալ մարզաձևում մարզիկների ցուցաբերած արդյունքներից: 2025 թվականին 5 ֆեդերացիաների ֆինանսական և հաշվապահական գործառույթներն առաջին անգամ իրականացվել են Սպորտի կառավարման կենտրոնի կողմից՝ նպաստելով գործընթացների արդյունավետության բարձրացմանը: 2026 թվականից Սպորտի կառավարման կենտրոնի կողմից վարվող ֆեդերացիաների թիվը կկրկնապատկվի:

ՄԱՐԶԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երկրի բոլոր բնակավայրերում առողջ ֆիզիկական ակտիվությամբ զբաղվելու համար հասանելի ենթակառուցվածքների, ներառյալ առնվազն երեք մարզաձևերով զբաղվելու հնարավորությունների ապահովմանը միտված իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Ընթացքում են եղել շուրջ 100 սպորտային ենթակառուցվածքներին ուղղված աշխատանքներ, որոնց թվում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ ՀՀ մարզերում 9

մարզադպրոցների, Երևանի քաղաքապետարանի կողմից 60 ֆուտբոլի փոքր դաշտերի և 2 մարզադպրոցների վերանորոգում, շուրջ 16 մարզադպրոցների և մարզահամալիրների վերակառուցում ու կառուցում ՀՀ ԿԳՄՍ նախարարության ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև 10 սթրիթ վորքաութ մարզահրապարակների կառուցում, որից 2-ական՝ Գեղարքունիքի և Վայոց ձորի, 3-ական՝ Սյունիքի և Տավուշի մարզերում: Թվարկված սպորտային ենթակառուցվածքներին պետք է ավելացնել նաև դպրոցաշինության շրջանակներում ավելի քան 200 դպրոցների մարզադահլիճների և մարզահրապարակների կառուցումն ու հիմնանորոգումը:

Նախատեսվում է այսուհետև Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից կառուցվելիք խաղադաշտերը դիտարկել՝ «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերանորոգվող 300 դպրոց ծրագրի» շրջանակներում՝ նոր ստեղծված կրթահամալիրներին կից: Մասնավորապես իրականացվում են մի շարք հաստատությունների՝ Երևանի օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջի մարզադահլիճի հիմնանորոգման, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի N 1 դպրոցի, ՀՀ Շիրակի մարզի՝ Մարալիկի թիվ 1 դպրոցի, Ախուրյանի ավագ դպրոցի և Ձորակապի մարզադպրոցի մարզադահլիճների կառուցման, ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցման, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի ավագ և ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի N 1 ավագ դպրոցների մարզադահլիճների վերակառուցման աշխատանքները:

Ավարտական փուլում են գտնվում՝ Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի, Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի, Արմավիր համայնքի Մյասնիկյան բնակավայրի մարզադպրոցի և Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի մարզադպրոցի նոր շենքերի կառուցման աշխատանքները:

Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի նոր մարզաբազան, Արթուր Ալեքսանյանի անվան մարզական համալիրը և Արթուր Աբրահամի անվան մարզադպրոցը գտնվել են շինարարության փուլում:

Շարունակվել են Երևանում, Արտաշատում, Իջևանում և Մարտունիում ֆուտբոլային 4 դպրոցների կառուցման աշխատանքները:

Միջոցառումներ են իրականացվում ՀՀ քաղաքներում մարզահրապարակների կառուցման, կահավորման և արդիականացման ուղղությամբ: Գույքագրվել են ՀՀ մարզերում և Երևան քաղաքում առկա 789 մանկական խաղահրապարակներ:

Յուրաքանչյուր մարզում բարձր նվաճումների սպորտի խթանման համար անհրաժեշտ սպորտային ենթակառուցվածքային համակարգի ստեղծումը ևս ոլորտի առաջնահերթություններից է: Վերջինիս համատեքստում շարունակվել են ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը, մասնավորապես՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական

հասարակական կազմակերպությունները գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2025 թվականին 10 կազմակերպության հատկացվել է 399,448.317 ՀՀ դրամ արժողությամբ գույք:

ՀՀ կառավարության 2025 թվականի օգոստոսի 28-ի նիստում հաստատվել է Արարատ, Եղեգնաձոր և Մարտունի համայնքներում սիրողական սպորտի զարգացման ծրագիրը՝ մասնավորի հետ համագործակցությամբ: Նախատեսված է յուրաքանչյուր խոշորացված համայնքում տիպային մարզահամալիրի կառուցում, որը պարտադիր պետք է ներառի խաղային մարզադահլիճ, տարբեր մարզաձևերի զարգացման համար լողավազան, ֆիթնես սրահ՝ ծառայելով հանրության շրջանում ֆիզիկական առողջ ապրելակերպի տարածմանը և սպորտի զարգացմանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության և «Հիլլզ սպորտային համալիր» կենտրոնի (Զորախաչ ՍՊԸ) միջև կնքվել է «Հայաստանի Հանրապետության մարզերում սպորտային համալիրների կառուցման և դրանց շահագործման վերաբերյալ» համագործակցության հուշագիր: Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 2025 թվականի օգոստոսի 28-ի N 1238-Լ որոշմամբ հաստատվել է Արարատ, Եղեգնաձոր և Մարտունի համայնքներում սիրողական սպորտի զարգացման ծրագիրը՝ մասնավորի հետ համագործակցությամբ: Համագործակցության հուշագրի հիման վրա մարզահամալիրներ են կառուցվում Արարատ, Եղեգնաձոր, Մարտունի համայնքներում: Վերջնական տեսքի է բերվում և հստակեցվում է մարզահամալիրի օրինակելի նախագիծը:

Նախապատրաստվում են Զովունիում թեթև կոնստրուկցիաներով մարզադահլիճի կառուցման, նախագծանախահաշվարկային փաստաթղթերի պատրաստման աշխատանքներ:

Ինչպես նաև մարզադպրոցների սաների մարզումների շարունակականությունն ապահովելու և 18 տարին լրանալուց հետո էլ մարզումները մարզադպրոցներում շարունակելու հնարավորություն ընձեռելու նպատակով, նախատեսվում են օրենսդրական փոփոխություններ («մանկապատանեկան մարզադպրոց» բառերը փոխարինվել է «մանկապատանեկան» բառով):

Գործում է «Սպորտի կառավարման կենտրոն» ՓԲԸ-ն, որը հանդիսանում է սպորտային ենթակառուցվածքների գույքային կառավարիչը և ֆեդերացիաներին տրվող պետական ֆինանսավորման կառավարիչը՝ իրականացնելով անհրաժեշտ գնումների և հաշվապահական գործընթացները, ինչը կմեծացնի գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը և կնպաստի արդյունավետության աճին: 2025 թվականին 5 ֆեդերացիաների ֆինանսական և հաշվապահական գործառույթներն առաջին անգամ իրականացվել են «Սպորտի կառավարման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից՝ նպաստելով գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Ֆեդերացիաներին պետական աջակցությունը տրամադրվում է ֆինանսավորման նոր կարգով, որով սահմանվել են հստակ չափորոշիչներ, ինչպես նաև հավելյալ գործակիցներ՝ կախված տվյալ մարզաձևում մարզիկների ցուցաբերած արդյունքներից: Նոր կարգի համաձայն ֆեդերացիաները բաժանվում են հաշվարկման պայմանական երեք խմբի՝

1-ին խումբ՝ հենակետային,

2-րդ խումբ՝ հեռանկարային,

3-րդ խումբ՝ ծրագրային մարզաձևեր:

Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում ընդլայնվել է 2024 թվականից մեկնարկած՝ մասնավոր լողավազաններում դպրոցահասակ երեխաների լողի պարապմունքների պետական ֆինանսավորման ծրագիրը, որի շահառուների թիվը 2025 թվականին կազմել է 198՝ մեկնարկային տարվա 22 շահառուի փոխարեն՝ հասանելի դառնալով Արագածոտնում, Արմավիրում, Կոտայքում, Տավուշում և Լոռիում: Միաժամանակ, 2025 թվականին Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին օրենքում իրականացվել են փոփոխություններ, որոնք հնարավոր են դարձրել մասնավորի ենթակառուցվածքներում նաև այլ մարզաձևերով զբաղվելը խթանելը: Մարզաձևերի ընդլայնումը կիրականացվի 2026 թվականին:

ԲԱՐՁՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՍՊՈՐՏ

2025 թվականին Հայաստանի մարզիկները նվաճել են 357 մեդալ, որից 114-ը՝ ոսկե, 113-ը՝ արծաթե և 130-ը՝ բրոնզե: Մեդալներից 42-ը (կամ 12%-ը) նվաճել են կանայք: 2024 թվականից սկսած նվաճած մեդալների համամասնության մեջ գերակշռում են ոսկե մեդալները՝ կազմելով 32%, և կրկնապատկվել են կին մարզիկների նվաճած մեդալները: Հաշմանդամություն ունեցող մարզիկները միջազգային մրցաշարերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում նվաճել են 37 մեդալ:

Շարունակվել են բարձր նվաճումներ ունեցող ***մարզիկների խրախուսման ծրագրերը:***

Տարվա ընթացքում 120 մարզիկ և մարզիչ ստացել են պատվովճարներ՝ ընդհանուր 15.5 մլն ՀՀ դրամի չափով: 2025 թվականին ցուցաբերած մարզական արդյունքների համար անվանական թոշակ է հատկացվել (այդ թվում՝ նաև վարկանիշի ձեռք բերման համար) 432 մարզիկների և մարզիչների:

2025 թվականին միանվագ տարեվերջյան պարգևատրում է ստացել 189 մարզիկ, մասնավորապես՝ 50 մարզիկ ստացել է մինչև 500 հազար ՀՀ դրամ, 31 մարզիկ՝ մինչև 1 մլն ՀՀ դրամ և 108 մարզիկ՝ 1 մլն դրամից ավելի գումար՝ տարվա ընթացքում իրենց գրանցած հաղթանակների համար:

2024 թվականից վերափոխվել է տարվա լավագույն մարզիկների մրցույթը: Սահմանվել են անվանակարգեր՝ լավագույն 3 մարզիկներ, լավագույն կին մարզիկ, հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ, լավագույն թիմ (խաղային մարզաձևեր և շախմատ), լավագույն երիտասարդ մարզիկ, վերադարձ մեծ սպորտ և/կամ հայտնություն, Հայաստանի Հանրապետությունը լավագույնս հանրահռչակած մարզիկ, լավագույն մարզիչ: Սահմանվել է նաև հանդիսատեսի համակրանք անվանակարգը՝ առցանց քվեարկությամբ՝ նպատակ ունենալով նպաստել սպորտի մասսայականացմանը: 2025 թվականին ևս հաղթողները պարգևատրվել են 6 մլն 250 հազարական ՀՀ դրամով:

2025 թվականի տարեվերջի դրությամբ 36 մարզիկի շնորհվել է Հայաստանի Հանրապետության սպորտի վարպետի կոչում, 15 մարզիկի շնորհվել է միջազգային կարգի սպորտի վարպետի կոչում:

Սպորտային ժամանակակից բժշկագիտամեթոդական և բժշկավերականգնողական համակարգի ձևավորման համատեքստում՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական պոլիկլինիկայում գործում է սպորտային բժշկության կենտրոն, ՀՀ հավաքականների տարբեր տարիքային խմբերի մարզիկները բուժզննում և բժշկական օգնություն են ստանում կենտրոնի կողմից:

Շարունակվել են աշխատանքները ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սպորտային բժշկության բնագավառում կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ: 2025 թվականին ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սպորտային բժշկության բնագավառում որակավորվել է 10 սպորտային բժիշկ, որից 6-ը՝ վերապատրաստվել է:

Գործում է «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում ներառված հակադոպինգային գործունեությանը վերաբերող դրույթները, որոնք համապատասխանում են Համաշխարհային հակադոպինգային գործակալության (WADA) կողմից սահմանված չափանիշներին:

2025 թվականին Հայաստանի «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ն ակտիվորեն շարունակել է իրականացնել հակադոպինգային ծրագրեր, հրապարակել ուսումնական նյութեր և անցկացրել դոպինգի ստուգման թեստեր, որոնք նպաստում են Հայաստանի արդար մասնակցությանը Եվրոպայի և աշխարհի առաջնություններին, ինչպես նաև Օլիմպիական խաղերին: Հիմնական շահառուների թվում էին Հայաստանի տարբեր մարզաձևերի առաջատար մարզիկները և ազգային հավաքականի անդամները: 2025 թվականին իրականացվել է 454 թեստավորում (2025 թվականի ցուցանիշը 3,5 անգամ գերազանցել է 2022 թվականի ցուցանիշը):

Գործում է հակադոպինգային ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը՝ ՀՀ ԿԳՄՍ և ՀՀ ներքին գործերի նախարարությունների միջև: Հանրակրթական դպրոցներում իրականացվում է ծրագիր՝ դոպինգի դեմ պայքարի իրազեկման ուղղությամբ:

«Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից սերտիֆիկացվել է 20 մասնագետ:

Վրաստանի, Ղազախստանի և Բելառուսի սպորտային բժշկության կենտրոնների հետ համատեղ նախատեսվում է անցկացնել սպորտային բժիշկների վերապատրաստում:

Հայաստանի հակադոպինգային գործակալության մեխանիզմների ստեղծման և ներդրման արդյունքում ապահովվել է Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի հակադոպինգային ծառայության պահանջների կատարումը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի միջազգայնացման համատեքստում՝ շարունակվել են աշխատանքները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում միջազգային կառույցների հետ փոխհամագործակցությունը զարգացնելու ուղղությամբ: Մասնավորապես այդ նպատակով՝ հուշագրեր են կնքվել մի շարք երկրների

ոլորտը ղեկավարող գերատեսչությունների հետ, ակտիվ համագործակցություն է իրականացվում (EPAS) «Եվրոպայի խորհրդի սպորտի ընդլայնված մասնակի» համաձայնագրի և ԱՊՀ երկրների շրջանակներում: Աշխատանքներ են ընթանում Սերբիայի Բելգրադ քաղաքում անցկացվելիք «Expo 2027» մասնագիտացված համաշխարհային ցուցահանդեսին առանձին տաղավարով Հայաստանի Հանրապետության մասնակցության առնչությամբ, որտեղ ներկայացվելու են սպորտ և մշակույթ:

Իրականացվում են երկու միջազգային՝ «Ֆուտբոլային խաղերի և մարզական այլ միջոցառումների ժամանակ ապահովության, անվտանգության և սպասարկման խնդիրներին միասնական մոտեցման մասին» Եվրոպայի Խորհրդի և «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիաների՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվելու գործընթացները:

Արդեն իսկ տարբեր մարզաձևերում ներդրվել են ժամանակակից էլեկտրոնային համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս մարզական մրցումների մեքենայությունների հնարավոր բացառումը:

2025 թվականին ՀՀ կառավարությունը ներդրել է Լոս Անջելեսի 2028 թվականի օլիմպիական խաղերին նախապատրաստվելու աջակցության ծրագիր, որը կգործի 2026 թվականից:

2025 թվականին Հայաստանում անցկացվել են Կարատեի Եվրոպայի մեծահասակների առաջնությունը (49 երկիր, շուրջ 1000 մարզիկ և պատվիրակ), Բասկետբոլի Եվրոպայի մինչև քսան տարեկանների Բ դիվիզիոնը (21 երկիր, շուրջ 1 000 մասնակից), Վոլեյբոլի Եվրոպայի երիտասարդների առաջնության եզրափակիչ փուլը (16 երկիր, 1 500 մասնակից) և Տափօղակով հոկեյի աշխարհի Դ դիվիզիոնը (6 երկիր, 200 մասնակից):

Ջերմուկում ավելի քան 10 տարի ընդմիջումից հետո կայացել են համահայկական ձմեռային խաղերը, որոնց մասնակցել է ավելի քան 1 340 պատվիրակ՝ 18 պետությունների 88 քաղաքներից:

2025 թվականին ստեղծվել են նախադրյալներ սպորտի տնտեսականացման ուղղությամբ: Իրականացվել են Եղեգնաձոր, Մարտունի և Արարատ քաղաքներում պետություն-մասնավոր գործընկերությամբ արդիական մարզագույքով և այլ պայմաններով հագեցած, միջազգային չափանիշներին համապատասխանող տիպային մարզահամալիրների նախագծման աշխատանքները: Նախատեսվում է, որ տիպային մարզահամալիրները կկառուցվեն պետության միջոցներով՝ մրցույթով ընտրված կազմակերպության կողմից՝ հանձնելով մասնավորին հետագա հավատարմագրային կառավարման՝ հստակ չափորոշիչներով:

Մեկնարկել է սպորտային խոշոր ենթակառուցվածքների գործարկման բիզնես մոդելի մշակումը, որն իրականացվում է Վանաձոր քաղաքի մարզադաշտի՝ ՈՒԵՖԱ-ի ստանդարտներին համապատասխան վերակառուցման նախագծումն ու ծրագրի ղեկավարումը ստանձնած միջազգային փորձառու կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում:

Ազգային ստադիոնի կառուցումը նախատեսվում է իրականացնել «Ակադեմիական քաղաք»-ի կառուցման շրջանակներում: Վանաձորի մարզադաշտը տեղակապվել է Իջևանին, իսկ Մարտունիում կատարվել է հողահատկացում:

2025 թվականին տեղի է ունեցել Յուվենտուս ֆուտբոլային ակումբի հայաստանյան ակադեմիայի հիմնարկեքը: Տարածք է տրամադրվել նաև Կոտայքի մարզում համահայկական խաղերի մարզական ավանի կառուցման համար: